ԳԱՌՆԻ ԱՄՐՈՑԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Ա. ՍԱՀԻՆՅԱՆ

Գառնի ամրոցը հայկական ճարտարապետության անտիկ ժամանակաշրջանի ամրաշինության (ֆորտիֆիկացիա) առայժմ մեզ հայտնի ամենանշանակալի կառույցն է։

Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի Գեղասար գագաթի հարավային ստորոտում, ծովի մակերևույթից շուրջ 1400 մ բարձրության վրա, պատմական Կոտայք գավառի (այժմյան Աբովյանի շրջանի) Գառնի գյուղի հարավային եզրի եռանկյունաձև հրվանդանի տարածքում։ Գոյություն ունենալով անհիշելի ժամանակներից, այն եղել է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մատույցների պաշտպանական համակարգի հենակետը։

Մստենագրությունը Գառնի ամրոցի կառուցումը կապում է հայ ժողովրդի ամենահեռավոր անցյալի հետ. Մովսես Խորենացու մոտ հիշատակված ավանդության համաձայն, Հայկ նահապետի թոռան-թոռ Գեղամը «...առ ոտամբ նորին լերինն 'ի ձորակի մի ամրոջ շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ 'ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի»[1]։

Գառնիի վերաբերյալ ամենահնագույն ստույգ տեղեկությունը տալիս է ուրարտական թագավոր Արգիշտի I-ի (781—760)՝ Գառնի ամրոցում գտնված սրձանագրությունը, ուր հիշատակվում է «Գիառնիանի երկրի» նվաճման մասին[2]։ Նշանակում է Գառնի—«Գիառնիանի» անունը կրող երկիրը գոյություն է ունեցել դեռևս նախաուրարտական ժամանակներում։ Արձանագրությունը փորագրված է «վիշապ» անվանվող քարակերտ կոթողի պահպանված մասի քանդակապատ երեսի վրա։ Առաջին անգամ նման կոթողներ հայտնաբերվեցին 1909 թ. Գառնիի պեղումների ժամանակ, Ն. Մառի և Յա. Սմիռնովի կողմից, Գեղամա լեռներում։ Նյութական մշակույթի հնագույն այդ հուշարձանները, որոնք կապված են ջրի պաշտամունքի և հին կրոնական այլ հավատալիքների հետ, ինչպես տեսնում ենք, ստեղծվելով Ուրարտուին նախորդող ժամանակներում, պաշտամունքի առարկա են եղել նաև «Գիառնիանի» երկրի տեղաբնիկ ցեղերի մոտ։

Գառնի ամրոցի վերաբերյալ մյուս ստույգ տեղեկությունը հաղորդում է հռոմեական պատմագիր Կոռնելիուս Տակիտոսը, ըստ որի, 51 թ. վրաց Փարասման թագավորի որդի Հռադամիզդը, ցանկանալով հայկական գահը խլել Հռոմի կողմից կարգված իր հորեղբայր Միհրդատից, հարձակվում է Հայաստանի վրա։ Միհրդատը, հանկարծակի ներխուժումից ահաբեկված, փախել ու

---

[1] *«Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, գիրք II, ԺԲ, էջ 45։*

[2] Б. Аракелян, Урартская клинописная надпись из Гарни, *«Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 292—293։* П. Арутюнян, Чтение и интерпретация урартской надписи из Гарни, *նույն տեղում, էջ 293—297։*

պատսպարվել էր Գառնի ամրոցում («in Castellum Gorneas»), որն «ապահով էր թե՛ տեղադրության և թե՛ հռոմեական կայազորի պաշտպանության հետևանքով»[3]։ Պատմագիրը հայտնում է, որ դավադիրները, որոնց անհայտ էին «մեքենաները և ամրոցի պաշարման արվեստը», միայն դավաճանության ու կաշառքի միջոցով կարողացան գրավել ամրոցը։

Այս դեպքերից իրավացիորեն եզրակացվում է, որ Գառնին դեռևս այդ ժամանակ անմատույց բերդ էր և, ըստ ակադեմիկոս Հ. Մանանդյանի, այն պետք է կառուցված լինի մ. թ. ա. III—II դդ.[4]։

Տրդատ թագավորի անունը կրող Գառնիի հունարեն արձանագրությունը հաղորդում է, որ 76 թ. ամրոցը ենթարկվել է վերակառուցման[5]։ I դարում Գառնիում տեղի ունեցած այդ աշխատանքներին անդրադառնում է նաև Մ. Խորենացին, սակայն նա Տրդատ I-ի գործունեությունը վերագրում է Տրդատ III թագավորին (287—330)։ II դարի երկրորդ կեսին—III դարի սկզբին Վաղարշակ թագավորի որդին՝ Մեծ Հայքի թագավորը (որն, ինչպես ենթադրվում է, եղել է Խոսրով I-ը), արամեական գրությամբ Գառնիում թողել է ինչոր կարևոր առիթով արված արձանագրություն, սակայն ի՞նչ առիթով՝ անհայտ է[6]։ V դարի մատենագիրների մոտ Գառնին հիշատակվում է իբրև խիստ ամրացված արքունի ամրոց (Փավստոս Բուզանդ) կամ իբրև քաղաք իր անմատույց ամրոցով, ուր «կայանք զօրացն էին» (Եղիշե)։ Գառնին զորակայան է եղել նաև պարսիկների տիրապետության ժամանակ։ X—XIII դդ. Գառնին հաճախ անվանվում է գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ։ Հետագայում, իբրև անմատչելի ամրոց, նա աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը։

Գառնի ամրոցի գիտական ուսումնասիրության հիմքը դրվեց ակադեմիկոս Ն. Մառի կողմից, որի գլխավորած արշավախումբը 1909—1911 թթ. բացեց ամրոցի անտիկ տաճարի մնացորդները։

1949-ից Հանրապետության գիտությունների ակադեմիայի պատմության, իսկ 1959-ից՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ Բ. Առաքելյան) ձեռնամուխ եղավ ամրոցի սիստեմատիկ ուսումնասիրությանը։ Բացվեցին պաշտպանական համակարգի, պալատական կառույցների ու բաղնիքի մնացորդները և հայտնաբերվեց հնագիտական հարուստ նյութ։

Պարսպապատերի առանձին հատվածների տակ գոյություն ունեն կիկլոպյան ամրոցի պատի մնացորդներ. կիկլոպյան պարսպապատի և վաղբրոնզեդարյան կացարանների մնացորդներ են պահպանվել նաև ամրոցի ներսում։

Անտիկ շրջանում, հրվանդանի եռանկյան գագաթը կազմող բնական անանցանելի ժայռերի շարունակության վրա ստեղծվել է ժամանակի համար ա-

---

[3] C. C. Taciti, Annalium, XII, 45 (տե՛ս Կայուս Կորնելիուս Տակիտոսի տարեգրությունները, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941, էջ 55—56։ Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցումը, Երևան, 1946, էջ 19)։

[4] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 20։

[5] К. В. Тревер, Очерки по истории культуры Древней Армении, М.—Л., 1953, էջ 67։

[6] А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 138։

Ն.առիկ ամրաշինական հզոր կառուցվածք[7]։ Ամրոցի եռանկյունաձև տարածքը հարավից, հարավ-արևմուտքից, մասամբ արևելքից երիզված է մինչև 300 մետր բարձրության ժայռերով, իսկ հյուսիսից, հյուսիս-արևմուտքից և արևելքից շրջապատված է 14 աշտարակների հաջորդականությամբ ստեղծված պարսպապատով։ Պատերն ունեն 2,07—2,12 մետր հաստություն և ամբողջ պարագծով (աշտարակների հետ մեկտեղ) 314,28 մետր երկարություն. առանձին մասերում պահպանվել են 6—8 մետր բարձրությամբ 12—14 շարքեր։

Պարսպապատերը աշտարակներին միանում են ուղիղ գծով և վերջինների հետ հանդիպման հանգույցներում (նայած տեղանքին) կազմում ուղիղ, սուր կամ բութ անկյուն։ Աշտարակների գրեթե միանման (5,90—6,70 մ) եզրագծերով ստեղծված ուղղանկյունի հորինվածքը իր խորության կեսի չափով (3,00—3,50 մ) գտնվում է պարսպապատի արտաքին մակերեսից դուրս, իսկ այդ դուրս եկած հատվածի մոտավորապես կեսի չափով (1,54—1,78 մ) պարսպապատի ներսի մակերեսից ներս։ Տեղանքի ռելիեֆի անհավասարության հետևանքով այդ օրինաչափությունը առանձին դեպքերում խախտվում է։

Շինանյութը տեղական (Ռառնիի) կապտավուն որձաքարն է, պատերի շարը՝ չոր, առանց շաղախի։ Որմնաքարերը գրեթե սրբատաշ են, ժապավենաձև երիզներով, որոնց կողերը կտրված են 45 աստիճանի տակ, ունեն այսպես կոչված «եզրակոսներ»։

Հորիզոնական ուղղությամբ որմնաքարերը միացված են երկաթե գամերով և մետաղի ու քարի միացման հանգույցները լցված կապարով. վերևի և ներքևի շարքերի միջև մետաղական կապեր չկան։

Իբրև երկարության միավոր օգտագործված է ուրարտական ճարտարապետության մեջ լայն կիրառում գտած հին Միջագետքի նիպուրական կանգունը (51,8 սմ)[8]։

Ամրոցի մուտքը գտնվում է հյուսիսային պարսպապատի արևելյան ծայրում, պաշտպանական համակարգի ընդհանուր պարագծի գրեթե կենտրոնում[9]։ Այն տեղադրված է միմյանցից 5,28 մետր հեռավորությամբ կառուցված երկու աշտարակների (6,00—6,20×6,70 մ. չափի) միջև, ուր արևելյան կողմի աշտարակից պահպանվել են 0,56—0,60 մետր բարձրություն ունեցող երկու-երեք (տեղ-տեղ մինչև ինը) շարք, իսկ արևմտյան կողմի աշտարակից՝

---

7 Մինչ պեղումները, ամրոցի պարիսպներից երևում էին՝ գլխավոր մուտքի երկու կողմերի պատերի որոշ մնացորդները. մուտքից դեպի արևմուտք, պարսպապատի ուղղությամբ՝ դուրս ցցված մի շարք քարեր ու շաղախի զանգվածների բեկորներ և արևելյան պարսպի առանձին հատվածների ոչ մեծ բարձրությամբ արտաքին ճակատները (տե՛ս Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում, Երևան, 1933, էջ 31, նկ. 1)։ Պահպանված մասից անհնարին էր պատկերել ամրոցի ինչպես պաշտպանական ընդհանուր համակարգը, այնպես էլ առանձին հանգույցների կառուցվածքը։

8 А. В. Сивков, Об основных линейных мерах Урарту и древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1944, № 1—2, էջ 85։ Գառնիում պատերի հաստությունը կազմում է՝ 4 կանգուն (4×0,518—2,072 մ), աշտարակների ուղղանկյունի հորինվածքի եզրագծերը՝ 12 կանգուն (12×0,518—6,216 մ), պարսպապատերի ընդհանուր երկարությունը՝ շուրջ 600 կանգուն (600×0,518=310,8 մ)։

9 Մուտքից արևելք պարսպապատի երկարությունը կազմում է 145,71 մետր, դեպի արևմուտք՝ 168,57 մետր։

հինգից-վեց շարք։ Հիմքերի մոտ որմնաքարերը երբեմն ավելի մեծ (2,50—3,00×1,50×0,80—1,10 մ) չափերի են։

Աշտարակների եզրերում քարերը սրբատաշ մակերեսով հպված են իրար և միացված երկաթյա գամերով, իսկ ներսում՝ ունենալով կոպիտ տաշվածք, երբեմն առանց մետաղական կապերի ուշադրի կպցված են միմյանց և քա-



Ամրոցի պարսպապատերի արևելյան հատվածը։

ռերի միացման մակերեսների խորդուբորդությունների հետևանքով նրանց միջև առաջացած նեղ ճեղքերը լրացված են կրաշաղախով։ Այսինքն, հիշատակված ամբողջ բարձրությամբ, հորիզոնական ուղղությամբ, աշտարակները համատարած շարված են որձաքարի խոշոր զանգվածներով։

Մուտքի արևելյան աշտարակի արևմտյան հատվածը մեզ է հասել առավել մեծ բարձրությամբ։ Այստեղ, աշտարակի արևմտյան ճակատից դեպի աշտարակի միջուկը՝ 1,50 մետր խորության վրա պահպանվել են կրաշաղախի մեջ ագուցված շարքի մի քանի որմնաքարեր։ Թե՛ որմնաքարերը ըստ տեսակի (որձաքար) ու մշակման բնույթի և թե՛ կրաշաղախը պատկանում են աշտարակի սկզբնական կառուցվածքին։ Անտարակույս, այդ որմնաքարերը աշտարակի ներսում երբեմնի գոյություն ունեցած, այսպես կոչված, պահակային սենյակի արևմտյան պատի մնացորդներն են։

Երկու աշտարակները միացված են պարսպապատի համեմատությամբ նկատելիորեն բարակ (1,52 մետր հաստության) պատով, որի կենտրոնում ստեղծված է մուտքի՝ 2,32 մետր լայնություն ունեցող բացվածք։ Չնայած վերջինիս ոչ մեծ լայնությանը, այնուհանդերձ այդ բացվածքի միջով կարող էր անարգել անցնել մարտակառքը։ Մուտքի շեմի քարերի վրա պահպանված փորվածքներից հետևում է, որ դարպասը բացվել է դեպի ներս։

Դարպասը փակելու ձևի վերաբերյալ Բ. Առաքելյանն իրավամբ նշում է. «Շնորհիվ գյուղի արևելյան ծայրամասի գերեզմանատանը ամրոցի պարսպապատերի շարքերին պատկանող մի որձաքարի հայտնաբերման, հաջողվեց վերականգնել դարպասը փակելու եղանակը...։ Այդ քարը մեջտեղում ունի երկու կլոր մեծ անցք և նրանց ձախ կողմում՝ ուղղաձիգ փորվածք։ Անկասկած



Ամրոցի մուտքից արևելք գտնվող աշտարակի «պահակային սենյակի» արևմտյան պատի մնացորդները։

այն պատկանել է դարպասին. նրա 0,25 մետր տրամագծով լայն բացվածքները ծառայել են փակիչ-հեծանի ադուցման համար... իսկ ուղղաձիգ փորվածքը՝ հավանաբար փակիչի մետաղական հարմարանքի համար»[10]։

Ամրոցի պաշտպանական համակարգի արևելյան հատվածը.— Հրվանդանի բնական ժայռերից սկզբնավորվող պարսպապատին (որից պահպանվել են 4—6 որմնաշարքեր) հաջորդում են միմյանցից 25,80—35,46 մետր հեռավորությամբ չորս (մինչև 40 քառ. մետր մակերես ունեցող) ուղղանկյունի աշտարակներ։ Մեծ չափով ավերված է առաջին աշտարակը, հատկապես արտաքին պատերը. եթե պարսպապատերի միացման հանդույցում կամ պարսպապատերից ներս գտնվող հատվածում աշտարակից պահպանվել է 6—8 շարք, ա-

[10] Б. Аракелян, Гарни I, Ереван, 1952, էջ 27, նկ. 18։

պա պարսպապատից դուրս պահպանված որմնաշարքերի քանակը աստիճանաբար նվազելով հասնում է մեկ շարքի։ Այդ ավերածության հետևանքով հիշատակված ամբողջ բարձրությամբ բացվել է աշտարակի միջուկը, որը որոշակիորեն տարբերվում է մուտքի արևմտյան և արևելյան կողմերի աշտարակների ներքին կառուցվածքից։ Այստեղ աշտարակի արտաքին պարագծով կառուցված է 1,21—1,44 մետր հաստությամբ պատ, որի սրբատաշ քարերը նրա արտաքին եզրերի մոտ միացված են երկաթյա դամերով և երկաթի ու քարերի միացման հանգույցները լցված կապարով։ Պատի ներսի եզրերի քարերը դրսի քարերի համեմատությամբ կոպիտ են տաշված և երկաթյա միացումներ չունեն։ Կոպիտ տաշի (խորդուբորդությունների) հետևանքով այդ քարերն ընդհուպ իրար չեն միանում. նրանց միջև առաջացած ազատ մասը լրացվել է կրաշաղախով, իսկ աշտարակի ներսի դատարկ տարածությունը լցվել է կրի, ավազի, ճեղքված որձաքարի և գետաքարի համակցությամբ ստեղծված կրաբետոն։ Շաղախը լցվել է շերտ-շերտ, յուրաքանչյուր որմնաշարքի կառուցմանը զուգընթաց։

Արևելյան պաշտպանական գծում համեմատաբար անաղարտ վիճակում է առաջին և երկրորդ աշտարակների միջև գտնվող պատը, որից պահպանվել են շուրջ 5,00 մետր բարձրությամբ ութ որմնաշարքեր։ Չնայած ոչ մի որմնաշարք պատի ամբողջ երկարությամբ մի գծով չի ընթանում և որմնաքարերի ուղղաձիգ կողերին զուգընթաց հաճախակի են հանդիպում նաև շեղանկյուն եզրագծեր, այնուհանդերձ պարսպապատի պահպանված մասի ամբողջ մակերեսի վրա հետագա միջամտության հետք չի նկատվում. անկասկած, այն ամբողջապես պատկանում է ամրոցի սկզբնական կառուցվածքին։ Որմնաշարքերի միևնույն ուղղությամբ ընթացող կարանները գտնվում են նույն հորիզոնի վրա (բերված են շատ ճիշտ ընդհանուր հարթաչափի). պարսպապատի ոչ մի հատվածում նստվածք չի առաջացել։ Նկատելիորեն խորն են որմնաքարերի եզրակոսները, որոնք կառուցման ընթացքում կանխել են քարերի ուղիղ անկյունների կոտրվելը, միաժամանակ պատի ընդհանուր մակերեսի կապտավուն ֆոնի վրա ստեղծել են լույսի և ստվերի հետաքրքիր խաղ։

Լավ է պահպանված երկրորդ աշտարակը. պարսպի ներսի կողմից գոյություն ունեն մոտ 7,0 մետր բարձրությամբ տասնմեկ անաղարտ որմնաշարք, իսկ դրսից՝ 2,80 մետր բարձրությամբ 4 որմնաշարքի մնացորդներ։ Աշտարակի ներքին կառուցվածքն այնպիսին է, ինչպես առաջինինը։ Բացառությամբ մուտքի երկու աշտարակների, համանման կառուցվածք ունեն նաև ամրոցի մյուս բոլոր աշտարակները։ Միայն այդ աշտարակներում երևացող կրաբետոնից ցած պահպանված են 3—8 որմնաշարքեր, որոնք հնարավորություն չեն տալիս տեսնելու ներքևի հատվածի միջուկի կառուցվածքի բնույթը։ Հավանաբար արևելյան պարսպապատի առաջին աշտարակի նման, մյուս աշտարակներում նույնպես կրաբետոնային միջուկը սկսվում է ներքևի որմնաշարքի հորիզոնից։

Ամրոցի պաշտպանական համակարգի կրած վերակառուցումների լուսաբանման համար ուշագրավ է երկրորդ և երրորդ աշտարակների միջև ավելի քան հինգ մետր բարձրությամբ պահպանված պատը, որը երկրորդ աշտարակի մոտից 11,0 մետր ուղիղ գծով ընթանալուց հետո բեկվում է դեպի ներս և երրորդ աշտարակի հանդիպման հանգույցում նկատելիորեն նեղանում։ Որմնա-

քարերի մի մասը թե՛ ֆակտուրայով ու հարթությունների մշակման բնույթով և թե՛ հողմնահարվածության աստիճանով նման է առաջին ու երկրորդ աշտարակների միջև գտնվող պատի որմնաքարերին, իսկ մյուս մասը, ունենալով ավելի պակաս խնամքով մշակում (տաշվածք), ինչպես ֆակտուրայով, այնպես էլ գույնով տարբերվում է նրանցից։ Երրորդ աշտարակի մոտ, նույնիսկ միևնույն բարձրության շարքերի կարանները հորիզոնականի փոխարեն թեք ուղղություն ունեն։ Չնայած ամբողջ պատը կառուցված է շինարարական միևնույն տեխնիկայով (որձաքարի խոշոր զանգվածներ, չոր, առանց շաղախի շարվածք, երկաթյա միացումներ), այնուհանդերձ պատի ընդհանուր կառուցվածքում առկա է շինարարական երկու շրջան[11]։

Պարսպապատի ներսի երեսը դեռ լրիվ բացված չէ, սակայն պատի մոտ փորված հետախուզահորերը (շուրֆերը) ցույց տվեցին, որ ներսի կողմն ունի այն բարձրությունը, ինչ արտաքին ճակատը. բոլոր քարերը սրբատաշ են և եզրակոսներով։ Բնական է, այդպիսի մշակումով պատը չէր կարող իբրև հենապատ ստեղծված լինել և ներսի սկզբնական հատակը գտնվել է դրսի հատակի հորիզոնին հավասար, իսկ պատի ետևի հողի 7—8 մետր հսկայական շերտը (տեղ-տեղ դեռ ավելին) լցվել է հետագայում։ Նշանակում է ամրոցի ներսի տեղանքը ունեցել է խիստ անհավասար ռելիեֆ և անտիկ տաճարը փաստորեն կառուցված է բարձունքի վրա։

Երրորդ աշտարակից մեզ են հասել դրսից՝ չորս, ներսից՝ մոտ հինգ մետր բարձրությամբ ութ որմնաշարքեր. ներսում տեղ-տեղ պահպանվել են 8,0—8,5 մետր բարձրությամբ տասնչորս շարքի մնացորդներ։ Չնայած այդ բավականին մեծ բարձրությանը, անտարակույս, աշտարակը սկզբում եղել է ավելի բարձր։ Երրորդ և չորրորդ աշտարակների միջև ձգվող պատը գրեթե ամբողջապես ավերված է։

Ամրոցի պաշտպանական համակարգի հյուսիսային հատվածը.— Այստեղ աշտարակների միջև եղած հեռավորությունները զգալիորեն կրճատված են. բոլոր աշտարակները տեղադրված են միմյանցից 10,08—13,14 մետր հեռավորության վրա և ունեն հատակագծի գրեթե միանման (5,90×6,70 մ) չափեր։ Աշտարակների և նրանց միջև գտնված պարսպապատերի յուրաքանչյուրից պահպանվել է 3,42—5,41 մետր բարձրությամբ 5—8 որմնաշարք։

Արևելյան հատվածի նման, այստեղ նույնպես մեծ չափով վնասված են արտաքին պատերը։ Բնական է, մեխանիկական առաջին ավերիչ հարված-

---

11 Այս տեսակետից հետաքրքրական է հետևյալը. 1949—1950 թթ. պեղումների ժամանակ, մուտքից արևմուտք առաջին և երկրորդ աշտարակների միջև եղած պատի մոտ (ներսի կողմից) նկատեցինք որձաքարի խճի շուրջ 0,50 մետր հաստությամբ երկու շերտ (տե՛ս նաև Б. Аракелян. Гарни I, էջ 35)։ Առաջին շերտը գտնվում է պարսպապատի հիմքերից վերև, ամրոցի անտիկ շրջանի հատակի հորիզոնին հավասար, իսկ երկրորդը թափված է առաջին շերտի վրա հետագայում հավաքված 0,40—0,60 մետր հաստություն ունեցող խիստ ամրացած հողի վրա։ Հողի այդպիսի շերտի կուտակումը և ամրացումը կարող էր տեղի ունեցած լինել անշուշտ շատ երկար ժամանակների ընթացքում։ Խճի երկրորդ շերտի մեջ հայտնաբերվեց քարտաշի երկաթյա գործիք (հատիչ)։ Հաջորդ տարիների (1951—1952 թթ.) պեղումների ժամանակ որձաքարի խճի նման շերտեր բացվեցին նաև հյուսիսային ու արևելյան պարսպապատերին անմիջապես կից (ներսի կողմից), որոնց քարի տեսակը նման է ամրոցի սկզբնական կառուցվածքի քարերին. կասկածից վեր է, որ խճի այդ երկու տարբեր շերտերը պատկանում են կառուցողական երկու տարբեր շրջանների։

ները ստացվել են դրսից. իսկ հետո ժամանակը դանդաղորեն, շրջապատի աղգաբնակչության օժանդակությամբ շարունակել է ավերումը[12]։

Ինչպես նշվեց, որմնաքարերը մետաղական ուղղաձիգ կապեր չունեն. անշուշտ այդ է պատճառը, որ մուտքից դեպի արևմուտք գտնվող առաջին և երկրորդ աշտարակների միջև կառուցված պատի 4—5 որմնաշարք երկրաշարժի հորիզոնական հարվածից զգալի չափով սահել են հարավից հյուսիս և կոնսոլաձև կախվել մեկը մյուսի վրա։ Աշտարակների և պարսպապատերի արտաքին ճակատների որմնաքարերի մեծագույն մասի անկյունները ջարդված և երկաթյա կապերի միացումների համար լցված կապարը դուրս է հանված։ Կ. Ռոմանովը իրավացիորեն ենթադրում է, որ այդ կապարը օգտագործվել է հրաղենի (հրացանի) գնդակներ և կոտորակ պատրաստելու համար[13]։ Նման երևույթ տեղի է ունեցել նաև Սիրիայում (Պալմիրա), Իրանում (Պերսեպոլիս) և այլուր։

Ամրոցի սկզբնական կառուցվածքը, բացի անտիկ ժամանակներում ունեցած շինարարական երկու շրջանից, վերակառուցման է ենթարկվել նաև հետագա դարերում։ Այսպես. մուտքի բացվածքի արևելյան կողմի պատից պահպանվել է 2,00—3,00 մետր լայնություն և 7,00 մետր բարձրություն ունեցող մի խոշոր զանգված, որն ակնհայտորեն կառուցողական երեք շրջանի արգասիք է։ Ներքևի մասում (դրսից և ներսից) գոյություն ունեն 0,56—0,60 մետր բարձրության 3—4 որմնաշարքեր, որոնք շարված են որձաքարի մեծ զանգվածներով, չոր, առանց շաղախի և իրար են միանում երկաթյա կապերով։ Անկասկած, այդ մասը ժամանակակից է մուտքի երկու կողմում գտնվող աշտարակների կառուցման ժամանակաշրջանին և պատկանում է պարսպի սկզբնական կառուցվածքին։ Դրանից վերև, դրսի կողմում գտնվող, որձաքարից կառուցված մոտ 5,0 մետր բարձրության 12 որմնաշարքերը (որոնց արտաքին երեսների կիսակոպիտ մշակումը խիստ տարբերվում է ներքևի շարքերի քարերի մշակումից) ունեն 0,18—0,50 մետր բարձրություն։ Այդ մասում պատի ամբողջ հաստությունն ըստ էության կազմում է կրի, ավազի և գետաքարի կամ ճեղքված որձաքարի համակցությամբ ստեղծված շաղախի զանգվածը, իսկ որմնաքարերը կատարում են երեսապատման դեր։ Նույն պատի ներսի մասի որմնաքարերը գրեթե ամբողջությամբ թափվել են, սակայն կրաշաղախային միջուկի շնորհիվ պատը դեռ 5,0 մետր բարձրությամբ կանգուն է։

Պարսպապատի այս մասը, թե՛ որմնաքարերի չափերով, թե՛ նրանց մշակման եղանակով և թե՛ կառուցողական տեխնիկայով որոշակիորեն տարբերվում է նույն պատի ներքևի մասից և, անտարակույս, հետագա վերակառուցման արգասիք է։

Այդպիսի տարբերություն գոյություն ունի նաև մուտքի արևմտյան կողմում գտնվող առաջին և երկրորդ աշտարակները իրար միացնող պատի կառուցվածքում։ Պարսպապատից պահպանված 14 շարքերից ներքևի 6 շարքերը կառուցված են որձաքարի մեծամեծ զանգվածներով, առանց շաղախի, երկաթյա կապերով միացված, իսկ վերևի 8 շարքերը անհամեմատ փոքր չա-

12 Գյուղի հարավ-արևելյան ծայրամասի գերեզմանատուն է տարված և իբրև տապանաքար օգտագործված ամրոցի պարսպապատերի ավելի քան երկու հարյուր որմնաքար, որոնք պետք է նորից տեղափոխվեն ամրոց և տեղադրվեն իրենց նախկին տեղերում։

13 Տե՛ս Архив ИИМК, фонд № 29, арх. № 200, թ. 27։

փի քարերով, որոնք պատի հիմնական միջուկը կազմող կրաշաղախի նկատմամբ կատարում են երեսապատման դեր։ Պատի ներսի երեսի փոքր չափի բոլոր քարերը թաքված են, բայց պատը կրաշաղախային միջուկի շնորհիվ կանգուն է։

Շինարարական նման տեխնիկայով կառուցված պատի միջուկի մի քանի խոշոր զանգվածներ ընկած են ամրոցի հյուսիսային և հյուսիս-արևմտյան պարսպապատերի մոտերքում, իսկ երեսապատման քարերից մեծ քանակությամբ հանդիպում են ամրոցի պատերի ամբողջ պարագծի երկարությամբ։

Նշանակում է, պարսպապատերի այդ հատվածները ստեղծվել են այն ժամանակ, երբ Հայաստանում գոյություն է ունեցել պատի կառուցման այլ՝ ամրոցի սկզբնական կառուցվածքի շինարարական տեխնիկայից խիստ տարբերվող եղանակ։

Մուտքի արևելյան պատի դրսի կողմի այդ հետագա շարվածքի վրա պահպանված է ինչ-որ կամարի պատկանող մի քար. հավանաբար մուտքի սկզբնական կառուցվածքը հետագայում ստացել է կամարակապ առավել ընդարձակ հորինվածք։

Մուտքի նույն պատի ներսի երեսում գտնվում է շինարարական համանման տեխնիկայով ստեղծված տուֆաշեն մեկ այլ, առավել մեծ չափի կամարի մնացորդ։ Պահպանված քարերի աղեղների կորությունները ցույց են տալիս, որ կամարի բացվածքը, ընդգրկելով մուտքի երկու աշտարակների միջև ընկած ամբողջ տարածությունը, ունեցել է բավականին մեծ (6,20 մ) բարձրություն։ Անշուշտ, այս տուֆաշեն կառուցվածքի մնացորդներն էլ պատկանում են մուտքի՝ որձաքարով կատարված վերակառուցման հաջորդ շրջանին։

Մուտքի արևելյան աշտարակի հյուսիս-արևելյան անկյունին, գրեթե անկյունագծով կցված է մոտ 11 մետր տրամագիծ ունեցող կլոր աշտարակ, որից պահպանված են 0,37—0,50 մետր բարձրություն ունեցող 5—6 որմնաշարքեր։ Շրջապատում թափված մեծածավալ բեկորները ցույց են տալիս, որ աշտարակը ոչ թե քայքայվել է աստիճանաբար, այլ կործանվել է միանգամից։

Աշտարակի ներսում եղել է դատարկ տարածություն. պատերը թե՛ դրսից և թե՛ ներսից շարված են «ռուստիկում» («рустовка») ձևի մշակում ունեցող որձաքարով։ Պատի կառուցման եղանակը տարբերվում է ամրոցի ինչպես սկզբնական կառուցվածքի, այնպես էլ վերը հիշատակված վերակառուցումների եղանակից։ Այստեղ դրսի և ներսի քարերը պատի միջուկում գրեթե կցված են միմյանց և նրանց միջև ստացված ազատ (փոքր) տարածությունը լցված է կրաշաղախով, որը ոչ թե կազմում է պատի հիմնական միջուկը, այլ կատարում է որմնաքարերը միմյանց միացնողի դեր. պատի հիմնական կրող մասսան դարձյալ հանդիսանում է քարը։

Ամրոցի պաշտպանական համակարգի արևմտյան հատվածը.—Աշտարակները ու նրանց միջև ձգվող պատերը (որոնք այս հատվածում ավելի մեծ չափով են ավերված) ունեն նույն ձևը և գրեթե նույն չափերը, որպիսին հյուսիսային հատվածում։ Պարսպապատի արևմտյան շարունակության վրա, հավանաբար, ստեղծված է եղել ամրոցի երկրորդական մուտքը։

Ամրոցի ընդհանուր կառուցվածքի հիմքերը.— Գոյություն ունեն չորս տիպի հիմքեր. երբ պատերը և աշտարակները տեղադրվել են ժայռերի վրա, իբրև հիմք ծառայել են բնական ժայռերը (արևելյան հատվածում՝ հարավային

ծայրի ժայռերից սկզբնավորվող առաջին և երկրորդ պատերը, երրորդ պատի ելգալի մասն ու նրանց միջև գտնվող աշտարակները. հյուսիսային հատվածում՝ մուտքից դեպի արևմուտք երկրորդ և երրորդ աշտարակների միջև եղած պատը)։ Առանձին տեղերում պարսպապատերը դրված են անտաշ, մեծ չափի լեռ բարերից շարված կիկլոպյան պատի մնացորդների վրա (ամրոցի գլխավոր մուտքից դեպի արևմուտք երրորդ և չորրորդ աշտարակների միջև ձգված պատի որոշ մասը)։

Ամրոցի մյուս հատվածներում պատերն ունեն կրաշաղախով կառուցված սովորական հիմքեր, որոնք պատի ուղղաձիգ հարթությունից դուրս են գալիս 0,25—0,35 մետր ելունով և, նայած տեղանքին, ունեն 1,40—1,60, իսկ առանձին դեպքերում՝ մինչև երկու մետր բարձրություն։

Տեղանքի առավել անբարենպաստ վայրում, սովորական հիմքերից բացի կառուցված է նաև 0,30 մետր ելունով մինչև 0,50 մետր բարձրությամբ հիմքերի ներքան (արևելյան հատվածում՝ հարավային կողմից հաշված երկրորդ և երրորդ աշտարակների միջև ձգված պատը)։

Թե՛ բնական ժայռերի վրայից սկսվող և թե՛ կրաշաղախի հիմքերի վրա բարձրացող պարսպապատերի և աշտարակների ներքևի մասերից մեկ կամ երկու շարք, իբրև կանոն, պատերի մյուս քարերի համեմատությամբ ունեն խիստ կոպիտ տաշվածք։ Թերևս դրանք ծառայել են իբրև պատի որմնախարիսխ (ցոկոլ) կամ ժամանակին գտնվել հողի մեջ։

Այսպիսով, ամրոցի պարսպապատերի և աշտարակների մնացորդների ուսումնասիրությունից հետևում է.

1. Ամրոցի պաշտպանական համակարգի արևելյան հատվածում, որտեղ տեղանքի պատճառով հակառակորդը դժվարությամբ կարող էր մոտենալ պարսպապատին, հետևապես նրա հարձակումը հնարավոր կլիներ ավելի փոքր ուժերով ետ մղել, աշտարակները թվով քիչ են, այսինքն՝ կառուցված են միմյանցից մեծ հեռավորության վրա, իսկ ամրոցի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասերում, որտեղ թշնամին կարող էր համեմատաբար անարգել մոտենալ պարսպապատերին, հետևապես պետք էր, որ նրա դեմ ավելի մեծ ուժեր կենտրոնացվեին, աշտարակները թվով շատ են, այսինքն՝ կառուցված են միմյանց ավելի մոտ։ Ընդ որում, տեղանքից անկախ, իբրև ռազմապաշտպանական հատուկ միջոցառում, մուտքից դեպի արևմուտք 4-րդ և 5-րդ աշտարակները մյուս աշտարակների համեմատությամբ կառուցված են ավելի ներս՝ ստեղծված է արհեստական աղեղ, որի մեջ ներքաշված հակառակորդի ուժերը, ինչպես իրավացիորեն նշում է Բ. Առաքելյանը, ընկնելով աննպաստ պայմանների մեջ, պետք է դառնային ավելի հեշտ խոցելի[14]։

2. Ամրոցի առավել վաղ շրջանի աշտարակները ուղղանկյունի են. նման աշտարակներ գոյություն ունեն նաև հելլենիստական ճարտարապետության այլ կենտրոններում՝ Փոքր Ասիա (Միլետ[15], Պերգամոն[16]), Սիրիա, Բաալ-

---

[14] Б. Аракелян, Гарни I, էջ 31։

[15] Th. Wiegend, Siebenter vorlaufiger Bericht über die von den Koniglichen Museen in Milet und Didyma unternommen Ausgrabungen, Berlin, 1911, էջ 7—8 և հտ.։ Տե՛ս նաև М. М. Кобылина, Милет, М., 1965, էջ 160—161։ «Всеобщая история архитектуры», М., 1949, т. II, книга первая, էջ 226, աղ. 132։

[16] A. Conze, Königliche Museen zu Berlin, Altertümer von Pergamon, Berlin, 1913, Band I, Tafeln, Tafel III և հտ.։

բեկ[17], Ջեռաշա[18]) և այլուր։ Հայկական լեռնաշխարհում ուղղանկյունի ձևի աշտարակներ ստեղծվել են շատ ավելի վաղ առնվազն ուրարտական ժամանակներից (Տուշպա[19], Արգիշտիխինիլի[20], Թեյշեբաինի[21], Ազնավուր[22] և այլն)։

3. Գառնիի աշտարակները կառուցվել են երկու եղանակով։ Պաշտպանական տեսակետից առավել պատասխանատու հանգույցում, մուտքի աջ և ձախ կողմերի աշտարակները շարված են որձաքարի համատարած խոշոր զանգվածներով, չոր, առանց շաղախի. մնացած աշտարակների արտաքին պարագծով կառուցված են 1,15—1,50 մետր հաստության քարե շրջանակներ և նրանց մեջ շերտ-շերտ լցված է կրից, ավազից, ճեղքված որձաքարից ու գետաքարից կազմված կրաբետոն։ Կրաշաղախի օգտագործումը Գառնիում սկսվել է դեռևս մ. թ. ա. III—II դդ.

4. Ամրոցի կառույցում օգտագործվել են մետաղական միայն հորիզոնական կապեր։ Ջնայած Հայաստանի անտիկ շրջանի նյութական մշակույթի հուշարձանները դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրված, այնուհանդերձ, մեզ հայտնի նյութերն անգամ ցույց են տալիս, որ Գառնիի ամրոցում կիրառված մետաղական միացումներով շինարարական տեխնիկան գոյություն է ունեցել Հայաստանի նույն ժամանակաշրջանի նաև այլ վայրերում (Արմավիր[23], Երվանդաշատ[24], Երվանդակերտ[25] մ. թ. ա. III—II դդ., Արտաշատ[26] մ. թ. ա. II դար, Գառնիի անտիկ տաճարում, Անիի հնագույն կառուցվածքներում[27], պատմական Վաղարշապատում[28], այժմյան Ազիզբեկովի շրջանի Ափնա գյուղում[29] և այլն)։

5. Ամրոցի ընդհանուր կառուցվածքում ակնառու են շինարարական մի քանի շրջաններ, որոնք որոշակի լույս են սփռում Հայաստանում պատի կառուցողական արվեստի աստիճանական զարգացման ընթացքի վրա։

---

[17] B. Shulz und H. Winnefeld, Baalbek. Ergebnisse der Ausgrabungen und Untersuchungen in den Jahren 1898 bis 1905, Erster Band, Berlin und Leipzig, 1921, էջ 19։

[18] C. H. Kraeling, Gerasa, City of the Decapolis, New Haven, Connecticut, 1938, էջ 23։ Տե՛ս նաև С. Абамелек-Лазарев, Джераша, СПб., 1897, աղ. XIII։

[19] Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, էջ 37։

[20] А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1975, էջ 44։

[21] К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, Ереван, 1955, էջ 37։

[22] C. A. Burney and G. I. Lawson, Measured plans of Urartian fortresses, „Anatolian Studies", vol. 10, 1960, էջ 178—181, 188—192։ Գառնիին հար և նման է մասնավորապես Ազնավուրի պաշտպանական համակարգը։ Նույնանման կառույցներ գոյություն ունեն նաև ասսուրա-բաբելական ամրաշինության մեջ (Ասորեստանում՝ Դուր-Շարրուկին, Բաբելոնում՝ Մարդուկի տաճարի սրբազան տեղամասը և այլն)։

[23] Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 163, նկ. 5։

[24] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. I, Երևան, 1942, էջ 284—285։

[25] Նույն տեղում, էջ 331։

[26] Բ. Ն. Առաքելյան, Հին Արտաշատ, Երևան, 1975, էջ 20։

[27] Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, Л.—М., 1934, էջ 15։

[28] Ալ. Սահինյան, Հայկական ճարտարապետությունը ստրկատիրական հասարակարգի ժամանակաշրջանում (տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 54)։

[29] Այդ մասին մեզ հայտնեց պատմաբան-հնագետ Հ. Եղիազարյանը։

Առաջին շրջանին է վերաբերում պարսպապատերի և ուղղանկյուն հատակագիծ ունեցող աշտարակների առավել հնագույն կառուցվածքը, ուր պատերը շարված են մաքուր տաշված որձաքարի խոշոր զանգվածներով, առանց շաղախի, որմնաքարերը միացված են իրար երկաթյա կապերով։ Այս հատվածը պատկանում է ամրոցի մինչև 51 թ. գոյություն ունեցած կառուցվածքին և, ինչպես նշվում է, ստեղծված պետք է լինի առնվազն մ. թ. ա. III—II դդ.։ Աներկբայորեն, այս շրջանին է պատկանում պարսպապատերի մոտ բացված որձաքարի խճի առաջին շերտը։

Երկրորդ շրջանինն է նույն շինարարական տեխնիկայով և գրեթե նույն չափերի քարերով կառուցված մասը, ուր շարվածքի քարերի մշակման որակը որոշակիորեն զիջում է նախորդին։ Այս հատվածն է, անշուշտ, որ վերակառուցվել է Տրդատ I-ի գահակալության 11-րդ տարում, այսինքն 76 թ.։ Պարսպապատերի մոտ բացված որձաքարի խճի երկրորդ շերտը, ըստ երևույթին, առաջացել է այս վերակառուցման ժամանակ։

Երրորդ շրջանին է պատկանում մուտքի արևելյան կողմին կցված կիսակլոր աշտարակի կառուցվածքը։ Այստեղ, ի տարբերություն նախորդ շրջանների շինարարական արվեստի, պատերը շարված են անհամեմատ փոքր քարերով, առանց երկաթյա կապերի, որմնաքարերի միացման համար իբրև կապակցող նյութ գործ է ածված կրաշաղախը։ Սակայն պատի հիմնական կրող մասը, նախորդ շրջանների նման, դարձյալ քարն է և ոչ շաղախը։ Պատի կառուցման այս եղանակը հանդիսանում է նախորդ շրջանների չոր, առանց շաղախի կառուցվող պատերից կրաշաղախային խոշոր միջուկով պատերին անցման նախնական փուլը։ Հայտնի է, որ Խորենացին Գառնիի ամրոցի կառուցումը վերագրում է Տրդատ III-ին[30]։ Միանգամայն հնարավոր է, որ ռազմապաշտպանական տեսակետից ամրոցի կարևորագույն հանգույցում ստեղծված այդ խոշոր աշտարակի կառուցողը լիներ Տրդատ III-ը, որին հետագայում (թերևս առավել մեծարման նպատակով) վերագրվել է ամբողջ ամրոցի կառուցումը։

Չորրորդ շրջանինը որձաքարի խիստ փոքր քարերով և կրաշաղախի մեծ միջուկով պատի կառուցվածքն է. կառուցողական այս եղանակը Հայաստանում լայն կիրառում ուներ հիմնականում X—XIV դդ.[31]։ Ինչպես ցույց են տալիս այդ եղանակով իրականացված, ամրոցի մուտքի արևելյան աշտարակի ու արևմտյան աշտարակից դեպի արևմուտք ձգվող բավականին մեծ բարձրությամբ պահպանված պատի մնացորդները և պարսպապատի հյուսիսային հատվածի ամբողջ երկայնքով թափված համանման պատի որմնաքարերը, միջնադարում տեղի է ունեցել ամրոցի պարսպապատերի խոշոր վերակառուցում։ Գառնի գյուղի հնագույն խաչքարերից մեկի վրա փորագրված Կատրանիդե թագուհու 879 թ. արձանագրությունից եզրակացվում է, որ այդ ժամանակներում Գառնին պատկանում էր Բագրատունիներին, որոնք և կարող էին իրականացրած լինել այդ վերակառուցումը[32]։ Հետևապես, նման խոշոր վերակառուցում կարող էր տեղի ունեցած լինել Բագրատունյաց թագավորության շրջանում, թերևս X դարում։

---

30 Մովսես Խորենացի, գիրք Բ, ղ։

31 О. Х. Халпахчьян, Конструкция и форма в армянской архитектуре IV—XIV вв., «Архитектура и строительная техника», М., 1960, էջ 194։

32 Б. Аракелян, Гарни I, էջ 33—39, 84—87։

Հինգերորդ շրջանինը ամրոցի գլխավոր մուտքի արևելյան աշտարակի ներսի կողմում՝ շինարարական նույն տեխնիկայով ստեղծված տուֆաշեն կառուցվածքն է, որն ամենայն հավանականությամբ պատկանում է Զաքարյանների ժամանակաշրջանին։ Բագրատունիներից հետո Գառնին եղել է Զաքարյանների սեփականությունը[33]. անտիկ տաճարի պարակալի վրա պահպանվել է Գառնիի տեր Խոշաք իշխանուհու և նրա որդի Ամիր Զաքարեի 1291 թ. փորագրված արձանագրությունը։

Ամրոցի պաշտպանական համակարգի սկզբնական տեսքի վերակազմության նախագիծը.— Ստույգ վերականգնվում են ամրոցի ընդհանուր համակարգի պարսպապատերի և աշտարակների նախնական հորինվածքի եզրագծերը, բայց անհայտ են բարձրության չափերը, աշտարակների և պարսպապատերի վերջավորությունների կառուցվածքի ձևը, պարսպապատերի վրա բարձրանալու միջոցները (եղանակը) և ամենակարևորը՝ բուն պաշտպանության կազմակերպման բնույթը։

Բարձրության չափերը. համեմատաբար լավ են պահպանվել՝ արևելյան պարսպապատի հարավից հաշված երրորդ աշտարակը (6,95 մ), հյուսիսային հատվածում մուտքի արևելյան աշտարակը (8,89 մ[34], իսկ միջնադարի պատի մնացորդների հետ մեկտեղ ավելի քան 12 մ) և մուտքից դեպի արևմուտք առաջին և երկրորդ աշտարակների միջև ձգված պատը (6,64 մ, միջնադարի մնացորդների հետ մեկտեղ՝ 9,50—10,00 մ)։ Ուրեմն, պարսպապատերի և աշտարակների պահպանված մասի բարձրությունը կազմում է 10,00—12,00 մետր։ Սկզբում նրանք բնականաբար ունեցել են ավելի մեծ բարձրություն, որովհետև վերջին վերակառուցումից հետո անցած շուրջ տասը դարերի ընթացքում պետք է որ աստիճանաբար քայքայված լինեին նրանց կառուցվածքները և համապատասխանաբար կրճատված բարձրությունները։ Եթե նկատի ունենանք նաև այդ երևույթը, ապա կարելի է ոչ մեծ սխալ գործելով ընդունել, որ պարսպապատերը առնվազն պետք է ունեցած լինեին 12,00—15,00 մետր բարձրություն, իսկ ավելի ցածր տեղանքում՝ է՛լ ավելի բարձր[35]։ Կան պաշտպանական համակարգեր, ուր պարիսպների բարձրության չափերը գտնվում են նույն սահմաններում (Պերգամյան պաշտպանական կառուցվածքները[36] և այլն), կան և այնպիսիները, որոնք ունեցել են անհամեմատ շատ մեծ, գրեթե կրկնակի բարձրության պարիսպներ (Տիգրանակերտ)[37]։

---

33 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, գլ. Կե, Կզ։ Б. Н. Аракелян, Гарни, I, էջ 39—40։

34 Աշտարակի առաջին որմնաշարքից մինչև սենյակի հատակը եղած բարձրությունը հավասար է 6,51 մետրի. եթե դրան ավելացնենք նաև այդ սենյակի արևմտյան ճակատից պահպանված անտիկ շրջանի պատի որմնաքարերի 2,38 մետր բարձրության չափը, ապա անտիկ շրջանից պահպանված հատվածի բարձրությունը կկազմի 6,51+2,38=8,89 մետր։

35 Ամրոցի արևելյան հատվածի պատերը հյուսիսայինի համեմատությամբ սկսվում են 13,50 մետր ցածր տեղանքից, հետևապես արևելյան պատերը կունենային այլ բարձրություն և նրանց վերին հորիզոնի նիշը հյուսիսայինի նկատմամբ կլիներ ավելի ցածր։

36 C. Ch. Lanckoronski, Les Villes de la Pamphylie et de la Pisidie. Volume Premier. La Pamphylie, Paris, 1890, էջ 60, նկ. 43։

37 Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը ըստ Ապպիանոսի (Appiani Mithr., 84) կազմել է 50 կանգուն (շուրջ 26 մ). տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, էջ 167—168։



Ամրոցի պարսպապատերի հյուսիսային հատվածը. վերակազմություն։



Ամրոցի հյուսիսային հատվածի պարսպապատերի և աշտարակների պաշտպանական ընդհանուր հարթակը. վերակազմություն։

Աշտարակների ներքին հորինվածքը. ինչպես տեսանք, մուտքի արևելյան աշտարակի ծավալի մեջ, գետնից 6,51 մետր բարձրության վրա եղել է «Պահակային սենյակ»։ Արդ հետաքրքրական է, մյուս աշտարակները ունեցե՞լ են նման սենյակներ։ Պարսպի արևմտյան հատվածում աշտարակներից պահպանված մասի բարձրությունը կազմում է 2,80—6,95 մետր, հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածում՝ 3,17—5,50 մետր, և այդ բարձրությամբ բոլոր աշտարակների ներսը շարված է կամ համատարած քարով կամ լցված է կրաբետոն։ Ընդ որում, այդ աշտարակների մեծ մասի պահպանված կրաշաղախային միջուկի վերևի եզրը գտնվում է մուտքի արևելյան աշտարակի սենյակի հատակի հորիզոնից բարձր[38]. նշանակում է տվյալ բարձրության վրա սենյակի հետքեր չկան։

Հասկանալի է, որ պահպանված մասերի սկզբնական բարձրությունները կարող էին լինել ավելի մեծ, հետևապես, ստույգ չգիտենք ունեցե՞լ են արդյոք այդ աշտարակները (կամ նրանց մի մասը) ներսում սենյակներ և եթե ունեցել են, գետնից ի՞նչ բարձրության վրա են նրանք եղել։ Այսուհանդերձ, պետք է ենթադրել, որ այդ աշտարակները նույնպես կարող էին ունենալ սենյակներ և նրանք մուտքի արևելյան աշտարակի սենյակի համեմատությամբ տեղադրված կլինեին գետնից տարբեր բարձրությունների վրա։

Վիտրուվիոսը (մ. թ. ա. I դար), անդրադառնալով ժամանակի պաշտպանական կառուցվածքների պարսպապատերին, գրում է. «Ըստ իս, պատի հաստությունը պետք է անել այնպիսին, որպեսզի նրա վրայով միմյանց հանդիման գնացող երկու զինվածները (двое вооруженных) կարողանան իրար մոտով անարգել անցնել»[39]։

Մենք պարսպի 2,08—2,10 մետր հաստություն ունեցող պատի վրա պահպանելով 1,58—1,60 մետր լայնությամբ մարտեր վարելու հարթակ, պարբսպապատերի և աշտարակների արտաքին պարագծի ամբողջ երկարությամբ նախատեսում ենք 0,50 մետր հաստության և 2,00 մետր բարձրության[40] պարապետ, որի վերին մասը պատկերվում է ատամնաշարի տեսքով։ Իհարկե, հնարավոր էր ատամնաշարի փոխարեն պատկերել ընդհանուր պատ, իր համապատասխան հրակնատներով հանդերձ, ինչպիսին գոյություն ունի ամրաշինական ոչ քիչ կառույցներում[41]։ Մենք գերադասեցինք ատամնաշար. նման

---

38 Այս աշտարակը տեղադրված է դեպի արևելք մեծ թեքություն ունեցող ռելիեֆի վրա։ Նրա սկզբնական հիմքերը, հյուսիս-արևելյան հատվածում ամբողջությամբ քայքայվել էին, իսկ առաջին շարքի որմնաքարերը սահել դեպի արևելք և վերին շարքերի որմնաքարերի ծանրության տակ կոտրատվել, փշուր-փշուր եղել։ 1978-ին, վերակազմության մեր նախագծով ու ղեկավարությամբ աշտարակը ինը շարք բարձրությամբ վերակառուցվեց. վերաշարվեցին կահպանված քարերը, լրացվեց պակասող մասը և առաջին շարքի ու հիմքերի ամբողջ բարձրությամբ (0,90—1,10 մ) ստեղծվեց երկաթբետոնե համատարած հարթակ։

39 Витрувий, Десять книг об архитектуре, М., 1936, кн. первая, гл. пятая, էջ 32։

40 Բարձրության այդ չափը համանման կառույցներում տատանվում է 2,00—2,50 մետրի սահմաններում. տե՛ս Staatliche Museen zu Berlin, Altertumer von Pergamon, Band X, Die Hellenistischen Arsenale (Garten der Königen), Berlin und Leipzig, 1937, tafel 36. Staatliche Museen zu Berlin, Milet..., Die Befestigungen von Herakleia am Latmos, von Fritz Krischen, Berlin und Leipzig, 1922, Band III, Heft 2, էջ 14, նկ. 11· էջ 36, նկ. 29 և այլն։

41 Staatliche Museen zu Berlin, Milet..., Die Befestigungen von Herakleia am Latmos, von Fritz Krischen, Band III, Heft 2, էջ 22, նկ. 17· էջ 36, նկ. 29 և այլն։

վերջավորությամբ պարսպապատեր գոյություն են ունեցել ինչպես ուրարտական, այնպես էլ անտիկ ամրաշինության մեջ։

Ակադեմիկոս Բ. Պիոտրովսկին գրում է. «Ուրարտական ամրաշինության բնորոշ տիպակ է Վանա ժայռի վրա շինված ամրոցը։ ...Պատերը ամբողջապես կառուցված են քարից... երեսապատումը արված է լավ տաշված մեծ քա-



Ամրոցի մուտքի երկու կողմի աշտարակները, հատակագիծ (վերևում)։
Ամրոցի մուտքից արևելք գտնվող աշտարակի սենյակների հատակագիծը (ներքևում)։

բերից...։ Ամրոցի պատերի գիծը ուղիղ չի եղել, այն որմնանեցուկների կամ... կեղծ աշտարակների նման բաժանված է ելուններով։ Ասսուրական պատկերները նյութ են տալիս... ուրարտական ամրոցների, հատկապես նրանց ատամներով պսակված վերին մասի վերականգնման համար։ Քարե ատամներ հայտնի են նաև Վանի միջնաբերդից»[42]։

Վիտրուվիոսի տրակտատում հիշատակվող պաշտպանական կառույցի հորինվածքը, տրակտատի ծանոթագրությունների բաժնում ներկայացված գծագրում տրված է ատամնաձև վերջավորությամբ[43]։ Համանման վերջավորություններ ունեն փոքրասիական պաշտպանական կառուցվածքները (Ադալիա, Պամֆիլիա[44]), Հայաստանից ոչ շատ հեռու գտնվող հյուսիսմերձևսևծով-

---

[42] Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), էջ 199։
[43] Витрувий, նշվ. աշխ., գիրք I, գլ. V, ծանոթագրություններ, էջ 221—222, նկ. 3, 4։
[44] C. Ch. Lanckoronski, նշվ. աշխ., էջ 8—9, տախտակ 1։

յան երկրների անտիկ շրջանի ամրաշինական կառույցները (Պանտիկապեան I դարի երկրորդ կեսին[45], Բոսպորի I դարի վերջին—II դարի սկզբին պատկանող դրամների վրա պատկերված պաշտպանական կառույցները[46], IV դարի որմնանկարներում ներկայացված Խերսոնեսի պաշտպանական կառուցվածքները)[47], Բուլղարիայի[48] ամրոցները և այլն։

Պարսպապատերին և աշտարակներին նման վերջավորություն տալով, մենք սենյակները տեղադրում ենք աշտարակների միայն վերին մասում։ Ըստ էության այդպես է թելադրում նաև մուտքի արևելյան աշտարակից պահպանված հատվածը։ Աշտարակի շուրջ 12,00 մետր բարձրությամբ պահպանված կառուցվածքի ներքևի որմնաշարքից մինչև սենյակի հատակը կազմում է 6,51 մետր. եթե սենյակը (ինչպես համանման կառույցներում[49]) ունենար 4,00—4,50 մետր, իսկ նրա առաստաղը՝ 0,40—0,50 մետր բարձրություն, ապա աշտարակի վերին հարթակի արտաքին եզրագծով ընթացող պատի համար մնում է հազիվ 0,50—1,00 մետր բարձրություն։ Նշանակում է ամրոցի պարըսպի մեր նախատեսած հավանական բարձրության սահմաններում կարելի է տեղադրել միայն մեկ սենյակ։ Քանի որ մուտքի արևելյան աշտարակը նույն հատվածի աշտարակների համեմատությամբ սկզբնավորվում է ցածր տեղանքից, նրա սենյակի վրա նախատեսվում է նաև երկրորդը։

Մենք վերին սենյակների բարձրությունն ընդունում ենք 3,00, ներքևինը՝ 4,50 մետր, պատերի հաստությունը՝ 0,80 մետր[50], սենյակների գլխավոր (արտաքին) ճակատում նախատեսում երկուական, իսկ կողերի պատերում՝ մեկական հրակնատներ։ 1957-ի պեղումների ժամանակ, մուտքից դեպի արևմուտք երրորդ և չորրորդ աշտարակների միջև ձգված պատի դիմաց հայտնաբերվեց ձևավոր մի քար, որը, մեր կարծիքով, պատկանում է աշտարակի ներսի սենյակի հրակնատի բացվածքը երիզող կողերից մեկին։ Հրակնատների բացվածքների չափի որոշման համար ելակետ ունեցանք այդ քարը, ըստ որի հրակնատը դեպի դուրս չի նեղանում, այլ ունի ուղղանկյունի կտրվածք։

Պարսպապատերի և աշտարակների վերևում ստեղծված հարթակների վրա բարձրանալու համար, ամենայն հավանականությամբ, կառուցված են եղել պարսպի բարձրությամբ պատին հպված քարե աստիճաններ, որպիսին և ներկայացվում է վերակազմության նախագծում[51]։ Պարսպապատի հարթակի

---

45 Н. П. Сорокина, Архитектура античных государств северного Причерноморья, տե՛ս «Всеобщая история архитектуры», т. 2, М., 1973, էջ 368—369, նկ.նկ. 6, 9։

46 Նույն տեղում։

47 Նույն տեղում, էջ 368, նկ. 5։

48 «Годишникъ на Пловдивската Народна библиотека и музей», 1935—1936, София, 1937, էջ 122, նկ. 23։

49 Տե՛ս C. Ch. Lanckoronski, Նշվ. աշխ., էջ 60, նկ. 43։ Milet, Band III, Heft 2, էջ 22, նկ. 17։ „Годишникъ на Пловдивската Народна библиотека и музей", 1935—1936, էջ 122, նկ. 23։

50 Միլետյան թերակղզու հյուսիսային եզրի «Հերակլեա ծովախորշի» պաշտպանական համակարգի որոշ աշտարակներ թե՛ ընդհանուր կառուցվածքով (ուղղանկյունի հորինվածք և պարսպի արտաքին և ներսի կողմից ելուններ) և թե՛ չափերով (5,90×6,40 մ) հար և նման են Դաոնիի աշտարակներին։ Այդ աշտարակներից 70-րդ սենյակի պատերի հաստությունը հավասար է 0,65—0,75 մետրի, իսկ պարսպի արտաքին եզրերով ընթացող պատի հաստությունը՝ 0,55 մետրի (տե՛ս „Milet...", Band III, Heft 2, էջ 28, նկ. 21)։

51 Պարսպապատերի վերևի հարթակը բարձրանալու այդ եղանակը լայնորեն կիրառվել է ամրաշինության (ֆորտիֆիկացիոն) կառույցներում (տե՛ս Milet, Die Befestigungen von



Ամրոցի հյուսիսային հատվածի պարսպապատերի և աշտարակների պաշտպանական ընդհանուր հարթակի կտրվածքը. վերակազմություն

հորիզոնի ուղղությամբ մի քանի աստիճան ներքև նախատեսվում է աշտարակի սենյակի հատակը, որտեղից աշտարակի վերևի հարթակը (տանիքը) հնարավոր է բարձրանալ առավել փոքր լայնության քարե կամ փայտե աստիճաններով։

Այսպիսով, ներկայացվում է շուրջ 2200 տարի առաջ, կառուցողական բարձր արվեստով ստեղծված՝ Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի եզակի ամրոցի ընդհանուր կառուցվածքը, տրվում են՝ տարբեր դարաշրջաններում նրա կրած վերակառուցումների պատկերը, ամրաշինական ու կառուցողական տեխնիկայի առանձնահատկությունները, ինչպես և նրա պաշտպանական համակարգի սկզբնական հորինվածքի վերակազմության սխեմաները։

ОБОРОНИТЕЛЬНАЯ СИСТЕМА КРЕПОСТИ ГАРНИ

Заслуженный деятель искусств АрмССР А. А. САИНЯН

(Резюме)

Крепость Гарни существовала уже в ранний период царствования Арташесидов, а возможно, и при Ервандидах (III—II вв. до н. э.). Раскопки под отдельными частями крепостных стен выявили остатки циклопической стены. Крепость возведена на треугольном мысу, который с юга, юго-запада и частично с востока обрывается естественными неприступными скалами, а в остальной части стояла мощная стена с четырнадцатью башнями. Там, где скалы затрудняли подход к крепости, башни были редки, с той же стороны, где противнику легче было подойти к стенам, башни стояли чаще. В строительстве крепости выделяется несколько периодов. Стены и башни особенно сильно разрушены с западной и северо-западной сторон, как правило, снаружи. Сохранившаяся часть позволила составить проект реконструкции крепости и тем самым воспроизвести первоначальный вид ее оборонительно-фортификационной системы.

Heraklela am Latmos, Band III, Heft 2, էջ 14, նկ. 11· էջ 22, նկ. 17; էջ 28, նկ. 21 էջ 30, նկ. 23, էջ 36, նկ. 29 և այլն։ Th. Wiegand, նշվ. աշխ., էջ 8· նկ. 2։ B. Schulz, und H. Winnefeld, նշվ. աշխ., էջ 19, նկ. 3, „Годишникъ на Пловдивската Народна библиотека и музей", 1935—1936, էջ 98, նկ. 6 և այլուր)։